1. Հայր մեր, այժմ կնվիրենք
Նոր տարին Քեզի,
Ինչ որ Դուն բաշխես, գիտենք,
Այն է միշտ բարի:
Հոս վիճակ մը մնայուն,
Ձերծ ամեն ցավէ,
Չենք խնդրեր, այլ Քու անուն,
Հայր, փառավորէ:

2. Ո՞հ, կարո՞ղ է միտքը մանկան
Բախտը սահմանել,
Խորհուրդով յուր ապագան
Հորմեն լավ ընտրել:
Հավետ բարիքներդ անհուն
Հարկ է միտք բերել
Եվ ցնծմամբ Քու սուրբ անուն,
Հա՛յր, փառավորել:

3. Տե՛ր, թե որ մեզի մնան
Անթիվ պարգևներ,
Եվ կամ երկինքեն տեղան
Նոր օրհնություններ,
Եվ ինչ ալ այս Նոր տարին
Մեզի ընծայե,
Քու անունդ պաշտելի,
Հա՛յր, փառավորէ:

Նոտաներ